

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԱԳՐՔՐՈՒՄ
ՓՈՓՈՒՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»
ՕՐԵՆՔԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ**

1. Ընթացիկ իրավիճակը և իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը

Մասնագիտացված արդարադատության, այդ թվում՝ վարչական արդարադատության, ինստիտուտի ներդրումը, ի թիվս այլնի, նպատակ է հետապնդում առաջին հերթին ապահովել տվյալ ոլորտում դատական պաշտպանության իրավունքի իրացման արդյունավետությունը և լիարժեքությունը՝ արդարադատության այդ տեսակին բնորոշ առանձնահատկությունների հաշվառմամբ¹:

Վարչական արդարադատության շուրջ 12 տարիների ընթացքում Հայաստանի Հանրապետությունում ընդունված վարչական դատավարության երկու օրենսգրքերով կարգավորվեցին վարչական արդարադատության առանցքային հարցերը:

Այդուհանդերձ, այդ օրենսգրքերով վարչական գործերի քննության համար գրավոր կամ պարզեցված կարգ չի նախատեսվել, ինչը շարունակաբար հանգեցրել է Վարչական դատարանի ծանրաբեռնվածության մեծացման:

Թեև ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 18-րդ գլխով նախատեսված է գրավոր դատաքննություն անցկացնելու հնարավորություն, այն վերաբերում է միայն դատաքննության փուլին և իրականացվում է միայն դատավարության մասնակիցների համաձայնության դեպքում:

Հարկ է նշել, որ Օրենսգրքում 24.06.2020 թվականին կատարված փոփոխությունների արդյունքում ներդրվեց վճռաբեկ բողոքի քննության գրավոր ընթացակարգ:

Վերոգրյալի արդյունքում պարզ է դառնում, որ Վարչական դատարանում և Վարչական վերաքննիչ դատարանում գրավոր ընթացակարգի կիրառում նախատեսված չէ, ինչի արդյունքում տվյալ դատարանները գտնվում են գերծանրաբեռնված վիճակում և հնարավոր չի լինում երաշխավորել գործի ողջամիտ ժամկետում քննության սկզբունքը:

Գրավոր ընթացակարգը վարչական դատավարությունում ներդնելու անհրաժեշտությունը պայմանավորված է նախևառաջ այն հանգամանքով, որ

¹ Տե՛ս Սահմանադրական դատարանի 06.10.2015 թվականի թիվ ՍԴՈ-1190 որոշումը:

Վարչական դատարանում չափազանց մեծ քանակով վիճարկվում են Ճանապարհային ոստիկանության կողմից կայացված տուգանքների վերաբերյալ որոշումները²: Այսպես, Բարձրագույն դատական խորհրդի հայեցակարգով ևս առաջարկվել է վարչական դատավարությունում նախատեսել գրավոր ընթացակարգ՝ նշելով, որ վարչական դատարանում գերակշռում է Ճանապարհային ոստիկանության և Երևանի քաղաքապետարանի (ավտոկայանատեղերի համար օրենքով սահմանված տեղական տուրք չվճարելու դեպքում) դեմ հայցերը, որոնց քննությանը կողմերի մասնակցությունը հիմնականում չի ապահովվում և առհասարակ վերանում է նման գործերով բանավոր դատաքննության անհրաժեշտությունը:

Պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների ու դրանց պաշտոնատար անձանց ակտերն անվավեր ճանաչելու հետ կապված իրավահարաբերությունների վերաբերյալ վարչական գործերը կտրուկ աճել են (566%-ով): Պարզելու համար, թե պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների ու դրանց պաշտոնատար անձանց ակտերն անվավեր ճանաչելու հետ կապված իրավահարաբերությունների վերաբերյալ վարչական գործերի մեջ կոնկրետ որ գործերով է առկա թվի կտրուկ ավելացում, առանձին ուսումնասիրության են ենթարկվել այդ կատեգորիայում ներառված գործերը³:

Ընդ որում, դատական տեղեկատվական համակարգի (datalex.com), ՀՀ դատական դեպարտամենտի և ՀՀ Ճանապարհային ոստիկանության կողմից ստացված տվյալների ուսումնասիրությունը ցույց է տվել, որ Վարչական դատարանում 2018-2020 թվականներին ստացված պետական մարմինների, պաշտոնատար անձանց գործողությունների և ակտերի վիճարկման գործերի զգալի մասը կազմում են Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 123.3-րդ հոդվածով, 123.5-րդ հոդվածի 1-2-րդ մասերով, 123.6-րդ, 124-րդ, 124.3-րդ, 124.4-րդ հոդվածներով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը:

	<p>Պետական և տեղական ինքնակառավարման մարմինների դեմ հարուցվող վիճարկման հայցերով կայացված գործն ըստ էության լուծող դատական ակտեր</p>	<p>Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 123.3-րդ հոդվածով, 123.5-րդ հոդվածի 1-2-րդ մասերով, 123.6-րդ, 124-րդ, 124.3-րդ, 124.4-րդ և 124.7-րդ հոդվածներով նախատեսված վարչական</p>
--	--	--

² Տե՛ս Բարձրագույն դատական խորհուրդ, Հայաստանի Հանրապետության արդարադատության արդյունավետության համալիր բարելավման հայեցակարգ, 2018:

³ <http://new.court.am/storage/uploads/files/service-page/T63G7RkWdVgDqUNjPVQM5ddAQiTGmCyQJhrhWaXm.pdf>

		իրավախախտումների վերաբերյալ գործերի քննության արդյունքում կայացվող ակտեր
2019	7165 դատ. ակտ	5755 դատ. ակտ
2020	4957 դատ. ակտ	3247 դատ. ակտ

Հատկանշական է, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 123.3-րդ հոդվածով, 123.5-րդ հոդվածի 1-2-րդ մասերով, 123.6-րդ, 124-րդ, 124.3-րդ, 124.4-րդ և 124.7-րդ հոդվածներով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի քննության արդյունքում կայացվող ակտերի բողոքարկման վիճակագրությունը ունի հետևյալ պատկերը.

Դատ. ակտերի դեմ ներկայացված բողոքների ընդհանուր թիվ	ՃՈ-ի կողմից բողոքարկման թիվ	Վերաքննիչ դատարանի կողմից վիճարկման հայցերով դատական ակտերի բեկանման թիվ
2084 բողոք	729 վերաքննիչ բողոք (բողոքների 35%)	511 բեկանում
506 բողոք	258 վերաքննիչ բողոք (բողոքների 50%)	182 բեկանված դատ.ակտ

Վերոգրյալից բխում է, որ նմանատիպ գործերի համար, հաշվի առնելով գործի բնույթը, անհրաժեշտ է սահմանել բացառապես գրավոր ընթացակարգ:

Հատկանշական է, որ միջազգային փորձի ուսումնասիրությունից ևս բխում է գրավոր/պարզեցված վարույթը վարչական դատավարությունում ներդնելու արդի միտումները: Այսպես, Եվրոպայի խորհրդի արդարադատության արդյունավետության հարցերի եվրոպական հանձնաժողովի (CEPEJ) կողմից նշվել է, որ վարչական դատավարության արդյունավետությունը բարձրացնելու հիմնական միջոցներից է

վարչական գործերով պարզեցված վարույթի նախատեսումը⁴: Ընդ որում, հանձնաժողովն արձանագրել է, որ Եվրոպայի խորհրդի անդամ պետություններից 19-ը վարչական դատավարությունում ամրագրել են պարզեցված ընթացակարգ: Ավելին, վիճակագրությունը ցույց է տվել, որ վարչական գործերով պարզեցված վարույթը հիմնականում կիրառվում է, երբ դրամական պարտավորությունը կամ տուգանքի չափը չի գերազանցում օրենքով նախատեսված որոշակի գումարը, ինչպես նաև այն դեպքերում, երբ իրավախախտումն արձանագրվել է լուսանկարահանող կամ տեսանկարահանող սարքերով:

Գերմանիայի վարչական դատավարության օրենսգրքի 84-րդ հոդվածի համաձայն՝ դատարանը կարող է առանց դատական նիստ հրավիրելու անցնել վճռի կայացման, եթե գործի բնույթը իրավական կամ փաստական առումով բարդ չէ և եթե գործի լուծման համար անհրաժեշտ փաստերը պարզված են⁵:

Էստոնիայի վարչական դատավարության օրենսգրքի 133-րդ հոդվածի համաձայն՝ դատարանը կարող է կիրառել պարզեցված վարույթ, եթե անձի իրավունքի խախտումն իր բնույթով լուրջ չէ, վեճի առարկայի գումարը չի գերազանցում 1000 եվրոն, ինչպես նաև այն դեպքերում, երբ կողմերը և երրորդ անձինք միջնորդում են գործը պարզեցված վարույթի կարգով քննելու: Ընդ որում, նույն օրենսգրքի 134-րդ հոդվածի համաձայն՝ պարզեցված վարույթի կարգով գործը քննելիս դատարանը կարող է սահմանել դատավարական փաստաթղթերը, ապացույցները ներկայացնելու ավելի սեղմ ժամկետներ, վճիռը չպատճառաբանել և այլն⁶:

Ռուսաստանի Ղաշնության վարչական դատավարության օրենսգրքի 291-րդ հոդվածի համաձայն՝ վարչական գործը կարող է քննվել պարզեցված (գրավոր) ընթացակարգով, եթե՝

-գործին մասնակցող բոլոր անձինք միջնորդել են գործը քննել իրենց բացակայությամբ և նրանց մասնակցությունը տվյալ գործին պարտադիր չէ,

-հայցվորը խնդրել է կիրառել պարզեցված վարույթ, իսկ պատասխանողը չի առարկել,

-տվյալ գործով դրամական պարտավորությունը կամ որպես տուգանք նշանակված գումարը չի գերազանցում 20.000 ռուբլին,

⁴ The European Commission for the Efficiency of Justice (CEPEJ). 2014. European judicial systems – Edition 2014 (2012 data): efficiency and quality of justice. Strasbourg, France:

⁵ http://www.gesetze-im-internet.de/englisch_vwgo/

⁶ <https://www.riigiteataja.ee/en/eli/512122017007/consolide>

-օրենսգրքով նախատեսված այլ դեպքերում⁷:

Լեհաստանի վարչական դատավարության օրենսգրքի 119-րդ հոդվածի համաձայն՝ վարչական դատարանը կիրառում է պարզեցված վարույթ՝

-եթե ներկայացվել է վարչական ակտն անվավեր ճանաչելու պահանջ,

-գործին մասնակցող անձանցից որևէ մեկը միջնորդել է կիրառել պարզեցված վարույթ և միջնորդության ներկայացման պահից 14 օրվա ընթացքում որևէ առարկություն չի ներկայացվել դատարանին,

-վարչական հայցի առարկան վերաբերում է վարչական մարմնի անգործությանը կամ վարչական վարույթի ժամկետների խախտումներին,

-օրենսգրքով նախատեսված այլ դեպքերում⁸:

Վերոգրյալից զատ, հարկ է ընդգծել, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանն, անդրադառնալով կոնվենցիայի 6-րդ հոդվածով երաշխավորված իրավունքներին, նշել է, որ անդամ պետությունները կարող են կիրառել պարզեցված ընթացակարգեր **«փոքր»** և ոչ բարդ գործերի համար: Նման մոտեցումը կարող է նպաստել դատարանի մատչելիության իրավունքի երաշխավորմանը, դատական խնայողության ապահովմանը և վեճերի լուծման դյուրինացմանը:

Ամբողջ վերոշարադրյալը վկայում է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու անհրաժեշտության մասին:

2. Առաջարկվող կարգավորման բնույթը

«Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծով (այսուհետ՝ Նախագիծ)

1) Օրենսգրքում ներդրվում են գրավոր ընթացակարգեր,

2) նախատեսվում է Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 123.3-րդ հոդվածով, 123.5-րդ հոդվածի 1-2-րդ մասերով, 123.6-րդ, 124-րդ, 124.3-րդ, 124.4-րդ և 124.7-րդ հոդվածներով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի քննության պարտադիր գրավոր ընթացակարգ, եթե առկա չեն գրավոր ընթացակարգը բացառող հիմքեր,

⁷http://www.consultant.ru/document/cons_doc_LAW_176147/ecf2ba1c4083d4d6c7964617ede6b9d7bc_ecc0e7/

⁸ Code of Administrative court Procedure, Poland

3) այլ վարչական գործերի քննության դեպքում ևս նախատեսվել է գրավոր ընթացակարգ կիրառելու վարչական դատարանի հայեցողություն,

4) Վարչական վերաքննիչ դատարանին տրված է հնարավորություն Վարչական դատարանում գրավոր ընթացակարգով քննության արդյունքում կայացված դատական ակտերի վերանայումն իրականացնել գրավոր ընթացակարգով:

3. Նախագծերի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձինք

Նախագծերը մշակվել են Արդարադատության նախարարության «Օրենսդրության զարգացման և իրավական հետազոտությունների կենտրոն» հիմնադրամի կողմից:

4. Ակնկալվող արդյունքը

Նախագծերի ընդունմամբ ակնկալվում է ապահովել բարձրացնել վարչական դատավարության արդյունավետությունը, նվազեցնել Վարչական դատարանի և Վարչական վերաքննիչ դատարանի ծանրաբեռնվածությունը, երաշխավորել ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքը և դատավարական խնայողությունը:

ՏԵՂԵԿԱՆՔ N 1

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԱԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ՆՈՐՄԱՏԻՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի ընդունման կապակցությամբ այլ նորմատիվ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն առկա չէ:

ՏԵՂԵԿԱՆՔ N 2

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԱԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄՆԻ ԲՅՈՒՋԵՏՈՒՄ ԵՎ ԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱՆՍԵՐԻ ԷԱԿԱՆ ԱՎԵԼԱՑՄԱՆ ԿԱՄ ՆՎԱՋԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի ընդունման կապակցությամբ պետական բյուջեում ծախսեր չեն նախատեսվում

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԱԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-890-09.03.2021-ՊԻ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	Կառավարություն	«Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) հիմնավորում	Նախագծի հիմնավորումներում. թույլ տրված վրիպակը՝ այն է «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի վկայակոչումները հանել:	Ընդունվել է: Հիմնավորումը լրամշակվել է:	Ընդունվել է: